Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.008

Information about the Culture of Textile Production in Medieval Armenia in the Works of Armenian Authors

Rafik Nahapetyan
https://orcid.org/0009-0005-8402-3174
YSU Faculty of History, Chair of Archeology and Ethnography, Doctor of Historical Sciences, Professor
rafiknahapetyan@mail.ru

Keywords: Medieval Armenia, embroidery, crafts, dipak (brocade), silk, linen, flax, gold-threaded fabric, cochineal.

From the Middle Ages until almost the end of the 19th century, there was no factory industry in Armenia. Specifically, the most rudimentary form of textile industry, organized within rural families, was called "cottage industry". The gradual development of this small-scale home production led to the emergence of crafts, meaning production by consumer order. This craft of producing fabrics was described by medieval Armenian historians with several names, including weaving/textile production, linen production, hand looming, weaving (knitting, crocheting, felting), carpet weaving, and others. In this article, it is deemed appropriate to summarize these names under one term: embroidery.

Embroidery originated in the Neolithic period, was known as hand looming in ancient times, and later as weaving (knitting, crocheting, felting) in the Middle Ages and beyond. It is presumed to have emerged by analogy with weaving baskets from tender tree branches and mats from wild grasses. The development of embroidery was largely connected with the emergence and subsequent expansion of agriculture and animal husbandry. These supplied the necessary raw materials for textile production (hemp, flax, cotton threads, silk, hair, wool, etc.). Over time, different crafts of weaving fabrics from threads of various origins gradually became differentiated within embroidery. The production of woolen fabrics was called wool production; making fabrics from flax thread was linen production, silk thread was silk production, and so on.

This article summarizes the diverse information known in Armenian historiography concerning the widespread embroidery culture in medieval Armenia, covering various chronological periods. It categorizes types of fabrics and cloths, presents their unique production and dyeing methods, and outlines the principles of their use in different strata of society. The information provided by Armenian chroniclers covers the 5th-18th centuries.

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 8-22

Received: 10.09.2025
Revised: 04.10. 2025
Accepted: 20.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Միջնադարյան Հայաստանի անկվածագործական մշակույթի վերաբերյալ տեղեկությունները հայ հեղինակների երկերում

Ռաֆիկ Նահապետյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հնագիտության և ազգագրության ամբիոն, պատմական գիտություններ իդոկտոր, պրոֆեսոր

Հիմնաբառեր՝ միջնադարյան Հայաստան, անկվածագործություն, արհեստներ, դիպակ, մետաքս, կտավ, վուշ, ոսկեթել գործվածք, որդան կարմիր:

Միջին դարերից սկսած՝ գրեթե մինչև XIX դարի վերջերը, Հայաստանում ֆաբրիկագործարանային արդյունաբերություն գոյություն չուներ: Մանավորապես տեքստիլ արդյունաբերության ամենանախնական ձևը, որը կազմակերպվել է գյուղական ընտանիքներում, կոչվել է «տնայնագործություն»: Տնային մանր արտադրության աստիճանական զարգացումն էլ հենց հանգեցրել է արհեստների առաջացմանը, այսինքն՝ սպառողի պատվերով արտադրությանը: Գործվածքեղեն արտադրելու այս արհեստը միջնադարյան հայ պատմագիրները բնութագրել են մի շարք անվանումներով՝ ***անկվածագործություն, կտավագործություն, ոստայնանկություն, ջուլհակություն, գորգագործություն*** *և այլն: Սույն հոդվածում նպատակահարմար է գտնվել նշյալ անվանումները ամփոփել մեկ անվանման մեջ՝* ***անկվածագործություն:***

Անկվածագործությունը *առաջացել է դեռևս նեոլիթի դարաշրջանում, հնում կոչվել է ոստայնանկություն, միջին դարերում, ավելի ուշ՝ նաև ջուլհակություն: Ենթադրվում է, որ այն ծագել է ծառի դալար ճյուղերից կողով, զամբյուղ ու ճիլ խոտերից խսիր գործելու նմանությամբ: Անկվածագործության զարգացումը մեծապես կապված էր երկրագործության ու անասնապահության առաջացման ու հետագա ընդլայնման հետ: Դրանք մատակարարում էին անկվածագործությանն անհրաժեշտ հումքը (կանեփի, վուշի, բամբակի թելեր, մետաքս, մազ, բուրդ և այլն): Անկվածագործության մեջ հետզհետե տարբերակվել են տարբեր ծագում ունեցող թելերից գործվածքներ գործելու արհեստները: Բրդեղեն (ասվի) գործվածքների արտադրությունը կոչվում էր* ***ասվագործություն****, վուշի թելից գործվածքներ պատրաստելը՝* ***կտավագործություն****, մետաքսաթելինը՝* ***մետաքսագործություն*** *և այլն:*

Հոդվածում ի մի են բերվում միջնադարյան Հայաստանում լայն տարածում ստացած անկվածագործական մշակույթի վերաբերյալ բազմաբնույթ ու ժամանակագրական տարբեր ընդգրկումներով հայ մատենագրության մեջ հայտնի տեղեկությունները, խմբավորվում են գործվածքների, կտորների տեսակները, ներկայացվում են դրանք ստանալու ու ներկելու յուրահատկությունները, դրանց գործածության սկզբունքները հասարակության տարբեր շերտերում: Հայ մատենագիրների հաղորդած տեղեկություններն ընդգրկում են V-XVIII դարերը:

Сведения о культуре производства текстиля в средневековой Армении в сочинениях армянских авторов

Рафик Наапетян

Information about the Culture of Textile Production in Medieval Armenia in the Works of Armenian Authors

Միջնադարյան Հայաստանի անկվածագործական մշակույթի վերաբերյալ տեղեկությունները հայ հեղինակների երկերում

Факультет истории ЕГУ, кафедра археологии и этнографии, доктор исторических наук, профессор

Ключевые слова: Средневековая Армения, вышивка, ремёсла, дипак (парча), шёлк, лён, золототканая ткань, кошениль.

С эпохи Средневековья и почти до конца XIX века в Армении не существовало фабричной промышленности. В частности, наиболее простая форма текстильного производства, организованная в сельских семьях, называлась «домашним производством». Постепенное развитие этого мелкого домашнего промысла привело к появлению ремёсел, то есть производства по заказу потребителя. Это ремесло изготовления тканей описывалось средневековыми армянскими историками под несколькими названиями, включая ткачество, льноводство, ручное ткачество, вязание, валяние (фелтинг), ковроткачество и другие. В данной статье целесообразно объединить эти названия под одним термином: текстильное производство.

Текстильное производство возникло в период неолита, в древности было известно как ручное ткачество, а позднее, в Средние века и далее, дифференцировалось на вязание, плетение и валяние. Предполагается, что оно возникло по аналогии с плетением корзин из молодых древесных ветвей и циновок из диких трав. Развитие этого промысла во многом было связано с появлением и последующим расширением земледелия и животноводства. Эти отрасли поставляли необходимое сырьё для производства тканей (волокна конопли, льна, хлопка, шёлк, козий пух, шерсть и т. д.). Со временем внутри текстильного производства постепенно дифференцировались различные ремёсла по изготовлению тканей из нитей различного происхождения. Производство шерстяных тканей называлось шерстоткачеством, изготовление тканей из льняной нити — льноткачеством, а из шёлковой нити — шёлкоткачеством.

В этой статье обобщаются разнообразные сведения, известные в армянской историографии, касающиеся широко распространённой культуры производства текстиля в средневековой Армении, охватывающие различные хронологические периоды. В ней классифицируются виды тканей и полотен, представлены их уникальные методы производства и окрашивания, а также принципы их использования в различных слоях общества. Информация, предоставленная армянскими хронистами, охватывает V–XVIII века.

* * *

Ներածություն: Գործվածքների արտադրությունը միջնադարյան Հայաստանում արհեստագործության առավել տարածված ու զարգացած ճյուղերից էր:

Միջնադարյան Հայաստանը մեծ ճանաչում էր ձեռք բերել անկվածագործական արտադրանքի, մասնավորապես մետաքսի արտադրության ու գորգագործության շնորհիվ: Ընդհանուր առմամբ, տարբեր նյութերից գործվածքեղեն արտադրելու արհեստը միջնադարյան Հայաստանում հայ պատմիչներն ու այլ հեղինակներ բնութագրել են տարբեր անվանումներով՝ **անկվածագործություն, կտավագործություն, ոստայնանկություն, ջուլհակություն, գորգագործություն**[1] և այլն: Ավելի նոր ժամանակներում այդ ամենը տեղավորվել է

1 Ժողովրդի մեջ, ըստ հայկական միջնադարյան աղբյուրների, գործածվել է կտավագործություն տերմինը, իսկ արհեստավորը կոչվել է կտավագործ [Մխիթար Գոշ, 1951, 120]: Գրական լեզվում ավելի գործածական է եղել ոստայնանկություն անվանումը, դրան համապատասխան արհեստավորն էլ կոչվել է ոստայնանկ [Գրիգոր Մագիստրոս, 1910, 204]: Ավելի հին են անկված ու անկվածագործություն անվանումները [Մովսէս

«**մանածագործություն»** հասկացության ներքո: Նշյալ ժամանակաշրջանում լայն տարածում ստացած անկվածագործական մշակույթի վերաբերյալ տեղեկությունները առատ են հայ մատենագրության մեջ: Այդ մասին առատորեն ու հիացմունքով հիշատակված են նաև արաբ IX-XIV դարերի մատենագիրների երկերում [Նահապետյան Ռ., 2023, 273-307]:

Միջնադարյան Հայաստանի արհեստների այս ոլորտը, անշուշտ, բավականաչափ ուսումնասիրվել են տարբեր գիտնականների՝ Բ. Առաքելյանի [Առաքելյան Բ., 1958, հ. 1, 265-290], Վ. Աբրահամյանի [Աբրահամյան Վ., 1956], Վ. Թեմուրճյանի [Թեմուրճյան Վ., 1955], Ս. Դավթյանի [Դավթյան Ս., 1981, 30-39, նույնի՝ Հայկական կարպետ, 1975], Ն. Ավագյանի Ավագյան Ն., 1983, 10-18] և այլոց կողմից, որոնք, ի թիվս այլ աղբյուրների, հիշատակել են հայկական մատենագրական նյութեր: Սույն ակնարկը բացառապես վերաբերում է գործվածքեղենին, մասնավորաբար մանածագործական մշակույթին, փորձ է արվում անդրադառնալու դրա տիպերին ու տարբերակներին, ծագումնաբանությանը, գեղազարդման համակարգի առանձնահատկություններին՝ ըստ հայ պատմիչների, երբեմն էլ՝ մատենագրական այլ տեղեկությունների հիման վրա: Այս նյութերի մի մասը կարող են կարևոր լրացումներ լինել մշակույթի այս ոլորտի համապարփակ պատկերի ամբողջականացման ասպարեզում[1]: Հայ հեղինակների տեղեկությունների համադրությամբ փորձ է արված հիմնավորելու դրանց ավանդութային կապն ու միևնույն հայ հանրույթի մշակութային ժառանգություն լինելը:

Անկվածագործական արհեստի զարգացման ընթացքն ու դրսևորումները հայոց մեջ: Գործվածքեղեն արտադրող արհեստավորին միջնադարյան հայ պատմագիրները բնութագրել են մի շարք անվանումներով՝ **կտավագործ, ոստայնանկ, անկվածագործ, ջուլհակ**: Անկվածագործության հնագույն ճյուղը եղել է մազից ու բրդից գործվածքներ պատրաստելը: Այծի մազից պատրաստված գործվածքը կոչվել է **այծենի** (այծամորթի), իսկ հյուսող արհեստավորը՝ **այծեմագործ**, նաև **խաղախորդ**, **աղաղորդ**՝ այծի մորթի մշակող նշանակությամբ [Սուքիասյան Ա., 2009, 32]: Ավելի բարձր որակի գործվածք ստացվել է բրդից: Բրդի ու բրդեղենի (ասուի, ասրեայ, ասրեղեն) գործվածքների մասին բազմաթիվ հիշատակություններ կան հայ հին մատենագրության մեջ [Նոր բառգիրք հայկական լեզուի, 1979-1981, հտ. ԱԲ, գ. Ա, 518]: Բրդից գործվածքներ պատրաստող արհեստավորը կոչվել է **ասրագործ՝** «Ասրագործ ոմն գործէր ի տան նորայ» [Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ, 1889, 85]:

Կոպիտ, կոշտ գործվածքները՝ քուրձերը, պատրաստվում էին այծի մազից և կոչվում էին խորգ [Փավստոս Բուզանդ, 1987, 398]: Դրանք հագնում էին ապաշխարության համար կամ սուգի ժամանակ: Մասնավորաբար ճգնավորների կրած զգեստը կոչվել է **մազեղեն** կամ **ցփսիս**: Այդպիսի հագուստ կրող կրոնավորների առնչությամբ ասում էին, որ **խարազնազգեստ են**: Մովսես Խորենացին գրում է. «Թողեալ այնուհետեւ զպերճագոյն հանդերձսն, խարազնազգեստ եղեալ: Արք կրօնաւորք խարազնազգեստք» [Մովսէս Խորենացի, 295-320]:

Անկվածագործության երկրորդ և գրեթե նույնքան հին ճյուղը բուսական թելերից գործված կոպիտ գործվածքն էր: Կանեփի կամ կտավի թելից պատրաստված կոպիտ գործվածքները կոչվում

Խորենացի, 1940, 158]: Թեև համեմատաբար ավելի նոր է, բայց միջին դարերում գործածվել է ջուլհակ [Ղաֆադարյան Կ., 1945, 21] տերմինը՝ դարձյալ կտավագործ, ոստայնանկ նշանակությամբ: Նոր ժամանակներում արդեն ավելի կիրառական է մանածագործություն տերմինը:

1 Սույն ակնարկում չեն շոշափվում մասնագործական ու գորգագործական արհեստները:

էին **պաստառակ** կամ **խաշար** [Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, 1912, 198]: Կանեփի թելից պատրաստում էին նաև ամեն տեսակի թոկեր ու կոպիտ գործվածքներ՝ վրանների, նավերի առագաստների և այլնի համար: Կտավից հյուսված թանձր, բայց բարձրորակ վարագույրներն ու ծածկոցները կոչվում էին բեժ [ՆՀԲ]: Մշակաբույսերի շարքում շատ տարածված էր վուշի կամ կտավի (կտավհատ) մշակությունը: Այստեղից էլ գործվածքեղենի այս տեսակը հայտնի էր **կտավագործություն**, իսկ արհեստավորը՝ **կտավագործ** անվանումներով: Հին հայերենում կտավե բարակ գործվածքները կոչվել էլ նաև **բեհեզ, բեհեզեղեն**: Այստեղից էլ հետագա դարերում առաջացել է **բազազ** անվանումը, որը նշանակել է գործվածքներ վաճառող վաճառական [Առաքելյան Բ., 270-271]: Վուշի թելերից կտորներ հյուսելու մասին հիշատակում է Մխիթար Գոշն (XII-XIII դդ.) իր «Առակներում» [Մխիթար Գոշ, 54]: Այս տեսանկյունից հետաքրքիր է նրա «Թթենի և ձիթենի» առակը. «… Իսկ թթենի ի քաղցրութիւն տղոյ, – գրում է նա, – և զի սաղարթ իւր նիւթ մետաքսոյ է, զոր որդունք ծնանին, յորմե կերպասք լինին, զոր թագաւոր և իշխանք վայելեն» [Մխիթար Գոշ, 50-514]: Մետաքս ստանալուն Գոշն անդրադարձել է նաև «Երկրագործք և բամբակենիք և սօսի» առակում, որտեղ բամբակենին վեճի մեջ է մտնում սոսու հետ և նրան ասում. «Ես թէպէտ փանաքի և տկար, այլ բազմաշահ՝ ոչ միայն մեծատանց, այլև աղքատաց, ի տածել, ի քաղել, և ի գործել, և լինիմ հանդերձ որպես դասը յոչխարաց և զվուշ ի կտաւե և ըզմետաքս յորդանց, յորոց և դու ոչ ինչ ունիս բնաւ, բայց միայն խոզակ» [Մխիթար Գոշ, 54]: Վկայակոչված առակից երևում է նաև, որ կտավը ստանում էին վուշից, իսկ բամբակը օգտագործվում էր ոչ միայն մեծատունների, այլև հասարակության բոլոր խավերի կողմից: Փաստորեն՝ անկվածագործության կարևոր հաջորդ ճյուղը բամբակե գործվածքներն են եղել: Առակի «զմետաքս յորդանց» արտահայտությունը նաև ցույց է տալիս, որ թեև առակը բամբակի ու սոսու մասին է, սակայն հիշատակում է մետաքսը ևս՝ շեշտելով, որ այն ստանում էին որդերից՝ շերամից:

Բամբակի մշակության մասին հիշատակություններ ունեն նաև այլ պատմիչներ: Մովսես Խորենացին նշում է. «Փայտակարան, լինի ՛ի նմա բամբակ ամբաւ» [Մովսէս Խորենացի, 151], իսկ Մովսես Կաղանկատվացին գրում է. «Եւ որ շուրջ զնովաւն են դաշտք՝ գտանի ի նոսա հաց և գինի շատ,… բամբակ և անբաւ ձիթենիք» [Մովսէս Կաղանկատուացի, 1860, 15]: XVII դարի հայ պատմիչներից Հակոբ Կարնեցին, խոսելով Երզնկայի մասին, գրում է. «Եւ ունի քաղաք մեծ բամբակօք, այգեստանօք և մրգաբեր ծառօք» [Հակոբ Կարենցի, 1903, 11-12]:

Ղազար Փարպեցին Այրարատի բարեբերության մասին նշում է. «զԱյրարատեան գաւառս, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան զօրինակ լիութեան…» [Ղազար Փարպեցւոյ, 1907, 19-20]: Այնուհետև նշում է արհեստները ժառանգաբար սերնդեսերունդ փոխանցվելու մասին. «Զի ամենայն արհեստաւոր, որ զիւր արուեստն ինքն գիտէ և օգտեալ յարուեստէն՝ զնոյն և որդւոց կամի ուսուցանել, զի կեցցեն» [Ղազար Փարպեցւոյ, 1907, 369]: Այսպես արհեստները որդվոց որդի շարունակվում էին:

VII-VIII դարերին վերագրվող հարկային վավերագրերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու տվյալ ժամանակաշրջանին բնորոշ տնտեսության հիմնական զբաղմունքների մասին: Դա Հայաստանից գանձվող արաբական խալիֆաթի հարկերի ցուցակն է, որում հիշատակվում են նաև յուրաքանչյուր ծխից գանձվող «ձիատոպրակ մի, պարան մի մազե,

ձեռնարար մի» [Սամուել Քահանայի Անեցւոյ, 1893, 82]: Սրանք անկվածագործությանն առնչվող առարկաներ են և հարկվում էին բոլոր ծխերից: Թերևս ձիատոպրակը «խուրջին» բառի հայերեն ձևն է, իսկ «ձեռնարար» բառը մեկնաբանվում է որպես ձեռնոց [Манандян А., 1985, էջ 137]: Մոնղոլական տիրապետության շրջանում՝ XIII դարում, Հայաստանից մոնղոլները հարկի ձևով, ի թիվս այլ իրերի, յուրաքանչյուր ծխից գանձում էին նաև երեք տոպրակ ու երկու չվան [Կիրակոս Գանձակեցի, 1961, 374]: Հայտնի է, որ Աշոտ Բագրատունու կինը՝ Կատրամիդե թագուհին, 980-ական թթ. Անիի Սուրբ Կաթողիկե եկեղեցին զարդարել է «ծիրանածաղկի ոսկեթել նկարագործ անկուածոց և ոսկեղեն անոթաց և բազմապայծառ լուսատու անոթոց փայելչությամբ» [Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, 1885, 316]: Իսկ Հաթերքի Վախթանգ իշխանի կին Արզու Խաթունը Գետիկի ու Հաղպատի վանքերին, Մակարավանքին ու Դաղիվանքին է նվիրում իր ու իր դուստրերի գործած վարագույրները [Կիրակոս Գանձակեցի, 208]:

Ոսկե կամ արծաթե թելերը հյուսվում էին թե՛ կերպասի և թե՛ բեհեզների հետ: Այդպիսի կտորները մեր պատմիչները անվանել են **դիպակ**: Դիպակը մետաքսի մի տեսակ ոսկեթել գործվածք և դրանից կարված հագուստ է [Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1979-81, հտ. ԱԲ, գիրք Ա, 624]:

Մետաքսագործությունը անկվածագործության առանձին ճյուղ էր, որը շատ աղբյուրներում հիշատակվում է նաև **ոստայնանկություն** անվամբ, և որի մասին նկարագրություններ պահպանվել են բազմաթիվ աղբյուրներում:

Բարձրորակ ու նրբահյուս գործվածքեղենը, այդ թվում՝ մետաքսե նուրբ միագույն ու ծաղկավոր գործվածքեղենը կոչվել է **կերպաս**: XII-XIII դարերի առակագիր Վարդան Այգեկցին այն անվանել է **աթլաս**: Նրան վերագրվող մի առակում ասված է. «Ագռաւն է հագեր **աթլաս** ու քիմխա, ի մեջքն է կապեր ոսկի **հայասայ**, ի վերեն քաշեր կանաչ **լաթիֆայ**» (բոլոր ընդգծվածները գործվածքների տեսակներ են) [Ժողովածոյք առակաց Վարդանայ, հ. Բ, 1894, 189, 344]: Մետաքսաթելի ու կերպասեղենի համար ժողովրդի մեջ գործածական էին նաև **աբրեշում** ու **աբրեշումեղեն** անվանումները:

Մետաքսից էին պատրաստվում որդան կարմրով ներկված հայկական հռչակավոր **ծիրանին**, որը պարսիկների ու արաբների շրջանում հայտնի էր որպես **կրմզ և մարիզի**, իսկ բյուզանդացիների մոտ՝ **պորփյուրիկոն** [Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, 1910, 204], դասվում էր ոսկեգույն խույրեր պատրաստելու՝ «խույրագործության» շարքը: Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990-1059 թթ.) հիշատակում է ծիրանի գործվածքներ ու ժանյակներ հյուսելու արհեստը [Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, 1910, 204]:

Մետաքսից, ըստ պատմիչների տեղեկությունների, պատրաստում էին ամենանրբին շղարշներ, որոնք կոչվում էին **կազ** կամ **գազ**, իսկ այդ արհեստը՝ **կազագործություն** [Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, 1861, 16-100]:

Մովսես Խորենացին ակնարկներ ունի թագավորական պալատների, իշխանական դղյակների տերերի ու եկեղեցիների բարձր հոգևորականության շրջաններում գործածական դարձած **ոսկեթել, ոսկեթեզան, ոսկեճամուկ, ոսկեհուռ, ոսկեկար, ոսկենկար և արծաթաթել** դիպակների վերաբերյալ [Մովսես Խորենացի, 190]:

Կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (897-927 թթ.), նկարագրելով ճոխ զգեստները, դրանք անվանում է «զգեստս ոսկեճամուկս» [Հովհաննես Դրասխանակերտցի, 198], իսկ

Ագաթանգեղոսը Հռիփսիմեի թաղման ժամանակ նարոտի համար ստացած կտորների մեջ հիշատակում է «զոսկեհուռն դիպակ». «Եւ կանայք պատուականացն ի մեծամեծայն դստերք՝ բերէին ծիրանիս և զոսկեհուռն դիպակն» [Ագաթանգեղոս, 1909, 395]: Հետաքրքիր է, որ «զոսկեհուռն դիպակն» արտահայտությունը շատ է հանդիպում հետագա պատմիչների երկերում: Ըստ Ագաթանգեղոսի՝ ծիրանի կոչվող զգեստը նույնպես մետաքսե գործվածք է՝ ներկված հայկական որդան կարմիր ներկով. «Առաւոտն հրամայեաց արկանել ծիրանիս» կամ «ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա» [Ագաթանգեղոս, 1909, 28-29]:

VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացու երկում կան շուրջ մեկ տասնյակի հասնող անկվածագործական կտորեղենի վերաբերյալ անվանումներ. «բեժ կտավով» (էջ 70), «գունակ գունակ» կերպասուցն (էջ 71), «զհանդերձս ծիրանիս» (էջ 140), «բեհեզաց և ծիրանեաց» (էջ 215), «սնդուս մետաքսառէջս» (էջ 200), «զկերպասանյութ դիպակս» (էջ 257) և այլն: Մովսես Կաղանկատվացին իր Պատմության մեջ հիշատակում է «ապրեշում և բամբակ և անբաւ ձիթենիք» [Մովսես Կաղանկատվացի, 15]:

Մեր պատմիչների կողմից բազմիցս հիշատակված, երանգ-երանգ ծաղկանախշերով զարդարված կերպասների, ոսկեթել դիպակների արտադրությունը միջնադարյան Հայաստանում փաստում են նաև ձեռագրերի կազմերի վրա եղած մետաքսե գործվածքները: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի՝ XII-XV դարերի մի շարք ձեռագրերի կազմերը ծածկված են տարբեր գույնի մետաքսե նուրբ կտորներով, որոնց բնորոշ են դեղին ու վառ կարմիր մետաքսե թելերը: Գործվածքների մի մասը ներկված է որդան կարմիրով: Ձեռագրերի կազմերի աստառներում օգտագործված է նաև սև գույնի ատլաս, որը գլխավորապես ծառայել է հոգևորականների փիլոնների ու գլխի ծածկոցների պատրաստման համար [Աբրահամյան Վ., 1956, 282, Дурново Л., 1953]:

Ձեռագրերի կազմերի աստառներում հանդիպող ոսկեթել դիպակներն ավելի բնորոշ են եղել հին ժամանակներին (IX-X դդ.) և քիչ են պահպանվել: Հետագայում (XI-XIII դդ.) դիպակներ պատրաստելիս դրանց զարդերի ոսկե կամ արծաթ թելերը փոխարինել են ոսկեգույն ու արծաթագույն ներկված մետաքսե կամ վուշե թելերով, որոնցով գործելիս արվել են ծաղկազարդեր:

Մետաքսե ոսկեթել ողորկ դիպակը կոչվել է **սնդուս**: Բավականին նուրբ դիպակ էր նաև **զառնավուխտ** պարսկական անվանումով դիպակը: Ոսկեթել դիպակներից պատրաստում էին ոչ միայն զգեստներ, այլև, ինչպես ասվեց, վարագույրներ, ծածկոցներ, անկողին, բարձեր, մութաքաներ [Հովհաննես Դրասխանակերտցի, 250, 265]:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցին (X-XI դդ.), խոսելով X դարում կառուցված Արգինայի վանքի մասին, ասում է, թե Խաչիկ կաթողիկոսը այս վանքը զարդարել է ոչ միայն «սքանչագեղ յորինուածովք», այլև «մեծապայծառ, ծիրանածաղիկ, ոսկեթել անկուածովք» [Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, 185]: Տարոնացին արձանագրում է Անիի կաթողիկե նորակառույց եկեղեցու (1101) զարդարանքի մասին. «...Զարդարեաց (Կատրամիդե թագուհու կողմից – Ռ. Ն.) ի զարդ ծիրանածաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որովք ջահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ» [Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, 256]: Այստեղ

անկվածը ոչ միայն ոսկեթել է ծիրանեծաղիկ, այլև նկարագործ, այսինքն՝ վրան նկարված են եղել զանազան պատկերներ:

XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին Գետիկի նորակառույց եկեղեցու զարդարանքի մասին գրում է. «Արար և վարագույր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց, ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք ճշգրտագոյն հանուածովք. տնօրինականօք փրկչից և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն» [Կիրակոս Գանձակեցի, 203]: Ըստ նույն պատմիչի՝ «իմաստութիւն ոստայնանկութեան եւ յանճար նկարակերտութեան» [Կիրակոս Գանձակեցի, 203] կանանց տրված աստվածային պարգև էր:

Բանաստեղծ Ֆրիկը (մոտավորապես 1234-1315), իր բանաստեղծություններից մեկում խարազանելով սոցիալական անարդարությունը, գրում է.

Մեկին բեհեզ և ծիրանի,
Մեկին բրդե շալ մի չանկնի,
Մեկին ատլաս ու ղըրմզի,
Մեկին շապիկ մի չի հասնի [Ֆրիկ, 1941, 236]:

Պատմագիրները ուշագրավ վկայություններ են հաղորդում մեծամեծ ընտանիքների զարդարուն հագուկապի մասին: Այսպես, Մովսես Խորենացին Արտաշես թագավորի թաղումը նկարագրելիս նշում է. «Պատմուճանն, որ զմարմնովն ոսկեթել» [Մովսես Խորենացի, էջ 72]: Այնուհետև խոսում է կանանց ու տղամարդկանց պճնվելու մասին. «Մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պես-պես գունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց հասարակաց բազմացոյց. որով զտգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք» [Մովսես Խորենացի, էջ 152]: Փավստոս Բուզանդը հայոց Արշակ Բ թագավորին բանտից դուրս բերելու առթիվ Դրաստամատի* կազմակերպած ճաշկերույթը նկարագրելիս գրում է, որ նա իր տիրոջը հագցնում է «ազնիւ պատմուճան», իսկ Ղազար Փարպեցին հաղորդում է. «Զպատուական քարինս, զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն… ի թագսն և ի հանդերձսն յոսկէհուռս պաճուճեալս ընդելուզանեն» [Ղազար Փարպեցի, 21]: Ղազար Փարպեցու երկում առաջին անգամ հանդիպում ենք **նափորտ** բառին, որ նույնպես մետաքսե գործվածք է: «Եւ ի վերայ սկուտեղն,– գրում է պատմիչը,– կայր նափորտ մի բեհեզեայ (կտավի ազնիվ տեսակ – Ռ. Ն.) ծալեալ» [Ղազար Փարպեցի, էջ 91]: Իսկ նախարարների կանայք «…փոխանակ կերպասեայ ոսկեհուռ զգեստուցն՝ խոշոր բերդեայս զգենուին» [Ղազար Փարպեցի, էջ 335]: Ուրեմն դժվար չէ նկատել, որ «ոսկեհուռ զգեստուցն» ասելով՝ նկատի ունի մետաքսե զգեստներ՝ ոսկեթելերով բանված, որոնց փոխարեն նախարարների գերի կանայք հանգում էին բրդեղեն գործվածքներ: Ծիրանագույն ու ազնիվ կտորից պատմուճաններ հագնում էին նաև թագուհիները, իշխանուհիներն ու ազնվական դասի կանայք: Պատմահայրը գրում է, թե ինչպես Տրդատը հրամայում է Աշխենին «զգեցուցանել ծիրանիս» [Մովսես Խորենացի, 22]: Իսկ Աժդահակի տեսիլում Հայաստանի լեռան վրա կանգնած էր «կին ոմն ծիրանազգեստ» [Մովսես Խորենացի, 77]: Ագաթանգեղոսն էլ նշում է, որ հայոց

* Դրաստամատը քուշանների դեմ պատերազմի ժամանակ պարսից Շապուհ արքային մահից փրկած զորավար էր, որին իրավունք էր տրվել այցելելու բանտարկված Արշակ արքային և արքայավայել հագուկապով ճոխ հյուրասիրություն կազմակերպելու [Փավստոս Բուզանդ, 1987, V դպր. գ. Է]:

թագավոր Տրդատ Գ-ն Հռիփսիմե կույսին արքունիք բերելու համար ուղարկում է նրան «ոսկիապատ գահաւորակ», նաև «հանդերձս ազնիւս գեղեցիկս, փափուկս, պայծառս և զարդարանս երևելի» [Ագաթանգեղոս, 90]: Ագաթանգեղոսի երկում կա անգամ Հռիփսիմե կույսի թաղման հանդեսի նկարագրությունը, որտեղ թագավորն ու իշխանները, ինչպես ասվեց վերը, բերում են ոսկեթելերով հյուսված գույնզգույն կերպասներ պատանքի համար:

Պալատականների ու իշխանների հագուստների ամբողջական պատկերը մենք գտնում ենք Եղիշեի երկում, որտեղ նա նկարագրում է Վասակ Սյունի մարզպանին պարսկական արքա Հազկերտ Բ-ի պալատ ներկայանալիս. «Եւ նա (Վասակը – Ռ. Ն.) ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ուներ ի թագաւորէն, կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն գնէր ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիակամբն» [Եղիշէ, 1957, 197-198]: Եղիշեն ունի «…զպատուական հանդերձն» և «զոսկեհուռն վերարկուն» [Եղիշէ, 1957, 136, 172] արտահայտությունները: IX-X դարերում Անանուն զրուցագիրն ունի մետաքսե շքեղ գործվածքներին վերաբերող բազմաթիվ արտահայտություններ, որոնք հանդիպում են նաև մյուս հայ պատմիչների երկերում: Այսպես, «հանդերձս պատուականս» (էջ 41), «հանդերձս պայծառս» (էջ 55), «հանդերձս ոսկեթելս» (էջ 55-56), «հանդերձս պատուականս ոսկեհուռն» (էջ 123) [Պատմութիւն անանուն զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), 1971] և այլն:

Մխիթարյան միաբանության աբբահայր Ղևոնդ Ալիշանը (1820-1901) տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանում մետաքսի արտադրության և առևտրի մասին: «Սիսուանում» կարդում ենք. «…Ընդ նմին և ազգ ինչ ոսկեճամուկ մետաքսեայ դիպակի. զի եթէ Սմբատ թագաւոր ի Վենետկոյ գնէր դիպակս ոսկեթելս (ինն փերթ) (յամի 1298) յընծայ սուլտանին, եղբայր նորա Օշին արքայ՝ յամին 1310 առաքէր ընծայ առ Դուքս Վենետկոյ դիպակս ոսկեթելս (Drapis ad aurum կամ Drapis setae գրեալ ի դիւանս Վենետկոյ)» [Ղ. Ալիշան, 1885, 385]:

Արհեստավորների հարկատվության մասին հիշատակություն է թողել Կիրակոս Գանձակեցին. «…Զամենայն արուեստագետս, եթե ի քաղաքս և եթե ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին» [Կիրակոս Գանձակեցի, 349]: Կիրակոս Գանձակեցու երկում կա վկայություն կտավի զանգվածային արտադրության մասին: Նրա աշխատության մեջ հաճախ ենք հանդիպում «հանդերձս ազնիւս», «զհանդերձդ թագաւորական», «հանդերձս մեծագինս», «…մետաքսառէջս ի կերպասուց պէս-պէս գունովս, և մեծագին նափորտս» արտահայտությունների [Ղ. Ալիշան, 1885, 67, 283, 318, 381, 311]: Կտավագործի, ջուլհակի և դերձակի մասին հիշատակում է նաև Գոշն իր առակներում [Մխիթար Գոշ, 120-122]:

Ուշագրավ տեղեկություն է թողել պատմիչ Ստեփանոս Ասողիկը, երբ նկարագրում է Սմբատ թագավորի ժամանակ Հայաստանի բարվոք վիճակը. «…Եւ այսպէս ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովուաց և անդէորդաց մետաքսայս զգենուլ պատմուճան» [Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, 161]: Ինչքան էլ չափազանցված լինեն պատմիչի խոսքերը հովիվների մետաքսե զգեստներ հագնելու մասին, համենայն դեպս, դժվար չէ ենթադրել, որ մետաքսե գործվածքները, հատկապես Բագրատունյաց

թագավորության տարիներին լայն կիրառություն ունեին Հայաստանում: Գրիգոր Մագիստրոսն էլ իր թղթերում գրում է. «…Եւ զանազան հանդերձիւք երեւելի մետաքսաց» [Գրիգոր Մագիստրոս, 224]:

Պատմիչ Ուխտանեսը (X դ.) հիշատակում է Մովսես կաթողիկոսի ժամանակ Դվինի կաթողիկոսարանի հանդերձարանում պահպանված թանկարժեք գործիքների, ոսկե և արծաթե սպասների ու զարդերի վերաբերյալ: Նա գրում է. «…Եւ յետ այնորիկ զԱթոռն և զգաւազանն, որ պատուով պահեալ էր և պաշտեալ, և զայլ ամենայն զսպասս սրբութեան՝ զսկիհս և զգեստ սրբոյն սեղանոյն, և զվարագոյրս և զխնկանոցս, և զբուրվառս, և զքշոցս, և զվակաս կաթողիկոսին մետաքսեայ կազմեալ յականց և յոսկոյ և ի մարգարիտէ, և զայլ… ևս պայծառս պատմուճանս պէսպէս զարդուց, դիպակաց, և կերպասուց, և ծիրանեաց՝ գունակ-գունակ և երփն-երփն և երանգ-երանգ՝ ծաղկազարդ գունոք գործեալ գեղեցկապէս, նաև զբարեպաշտին մերոյ թագաւորին Տրդատայ պատուական զգեստն, զոր տուեալ ի տուն Տեառն ի սպաս սրբութեան, որ մեր տեսեալ աչոք մերովք» [Ուխտանէս եպիսկոպոս, 66]: Այստեղից երևում է, թե մետաքսե թելն ու գործվածքներն ինչպիսի առատությամբ ու շքեղությամբ էին օգտագործվում եկեղեցու կողմից՝ կազմելով եկեղեցական հանդերձանքի հիմնական ատաղձը:

XII դարի պատմագիր Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական» աշխատության մեջ ներկայացնում է միջնադարյան հայկական անկվածագործական մշակույթում գտած զարդանախշերից նաև քառաթև խաչի ձևով պատկերի գեղազարդումը, որը կիրառական արվեստի կոմպոզիցիաներում ոչ բոլոր դեպքերում է, որ պետք է քրիստոնեական կրոնի ազդեցության հետևանք նկատել: Շնորհալին գրում է. «Քանզի ի ձև խաչի բազմում կերպարանք են յօրինեալք յերկինս և ի վերայ երկրի, նաև յանբան կենդանիս և յոստայնանկութիւնս և ի նկարս նկարագրաց, որոց ոչ առաք հրաման երկիր պագանել, քանզի չիք աստուածային զորութիւն ի նոսա, և որ արարածոյ երկրպագութիւն մատուցանէ՝ ընդ անիծիւք դատապարտեցին գիրք տուրք, որպէս զկռապաշտսն» [Ներսես Շնորհալի, 1825, 165]: Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ անցյալում նաև հողագործը, իր աշխատանքային գլխավոր գործիքի՝ արորի ու գլխավոր բերքի՝ ցորենի ամբարների, իսկ անասնապահը, գլխավոր լուծ քաշող բանող անասունի վրա քառաթև խաչի նշանը դնելով, ցանկացել են կանխել բնության պատուհասները՝ երաշտը, կարկուտը, զանազան հիվանդությունները, համաճարակները, անբերրիությունը և այլն: Իհարկե, զարդամոտիվներում մեծ տեղ են գրավել նաև կենաց ծառի պտղաբեր կոկոնի նշաձև պտղաբերության խորհրդանշյալ զարդամոտիվները [Եզնիկ Կողբացի, 1914, 149]: Վաղմիջնադարյան զարդամոտիվներում պատկերվել է նաև Եզնիկ Կողբացու բնապաշտական բովանդակությամբ նկարագրությունը՝ «արեգակն… զի մի անիւ է և բազում ճառագայթք» [Եզնիկ Կողբացի, 1914, 149], որի վրա միջնադարում ավելացել է նաև քառաթև խաչի նշանը:

Ինչպես հագուստեղենը, այնպես էլ դեկորատիվ նպատակներին ծառայող կտորները նկարազարդվում էին հյուսելու ընթացքում կամ դաջելու տեխնիկայով: Իշխող վերնախավի վերնազգեստները՝ պատմուճաններ, փիլոններ, գլխի ծածկոցներ, և դեկորատիվ գործվածքները՝ վերմակի ու բարձի երեսներ, վարագույրներ և այլն, պատրաստվում էին հատուկ պատվերով:

Ցավոք, մեր պատմիչները գերազանցապես նկարագրել են միայն արքաների, իշխանական տների, եկեղեցիների ունեցած հարստությունները, կրած հագուստեղենը: Այսպես, Դրասխանակերտցին հիշատակում է Բագրատունիների թագավորական տանը գործածված նուրբ

կտորներն ու գորգերը. «Եւ իբրև հարց ու փորձ ընդ նոսա լեալ և գրեթե՝ զկէս տէրութեանն իւրոյ տայ նոցա խոստանայր, այլև զգեստս և զարդս ոսկեճամուկս, և ծիրանիս և երևելի լակոնացի և բեհեզս նոցա մատուցանէր, և կամարս և մանեակս ոսկեղէնս» [Հովհաննես Դրասխանակերտցի, 252]: Սմբատ Ա-ի կողմից Ատրպատականի Յուսուֆ ոստիկանին ուղարկված նվերների մեջ պատմիչը հիշատակում է թանկարժեք կտորներ՝ ասեղնագործված հայ կանանց ձեռքով. «…Երևելի ոսկեճամուկ զգեստուք և ի նկարակերտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմականս կազմեալ, և բազում ձիս և ջորիս ի զարդ սև ի զէնս յարդարեալ, այլև գանձն ոսկւոյ և արծաթոյ» [Հովհաննես Դրասխանակերտցի, 210]:

XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը հավաստում է. «Զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ անհամարս, եւ գոհարս ականց եւ մարգարտաց զշահաւորն բազմագին եւ ոսկեթել հանդերձից եւ թագաւորական ծիրանի, մարգարտայեռն պատմուճանաց» [Ստեփանոս Օրբելեան, 1911, 33]:

Պատմիչների այս հիշատակությունները վկայում են միջնադարյան Հայաստանում պատրաստված բազմատեսակ կտորեղենի գոյությունը՝ զարդարված բուսական և այլ նախշերով՝ դաջելու, հյուսելու եղանակով:

Պատմիչների երկերում կան նաև հիշատակություններ հոգևորականների պատմուճանների, վակասների, ուրարների, եկեղեցական վարագույրների մասին՝ պատրաստված ազնիվ կտորեղենից, ասեղնագործված առաքյալների դիմանկարներով:

Անկվածագործության նշանավոր կենտրոններ էին Դվինը, Անին, Կարսը, Կարինը, Երզնկան, Խլաթը, Նփրկերտը: Հայկական հռչակավոր ծիրանի գործվածքի արտադրության նշանավոր կենտրոնը Դվինն էր:

Անկվածագործության մի ուրույն ճյուղ կար, որ միջնադարյան հայ մատենագիրների երկերում հիշատակվում է որպես **խորանագործ** կամ **խորանարար**: Ջուլհակները գործում էին ոչ միայն եկեղեցիների խորաններ (կտավներ, վարագույրներ), այլև առագաստներ նավերի համար: Առանձին անվանում ունեին դիպակե ծածկոց ու մութաքաների երեսներ գործողները՝ **դիպակագործներ**:

Շատ տարածված էին նաև **գոտեգործությունն ու ժանյակագործությունը**, **գուլպագործությունը, թաթպանագործությունը**: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը (XVII-XIII դդ.) 1735 թ. Արցախի ու Սյունիքի հայկական գյուղերում ստացած նվերների մասին խոսելիս իր գրառումներում նշում է. «Տուզախ ի գիւղն … ետուր ա. լիտր ապրշում, ա. խալիչա և բ. Կուլպաք: Հաթրուտու (Հաղրութ)… ա. լիտր հաստ ապրշում. Դիզակու ապրշում և խալիչա, Խնձորեսկում ա. լավ կարպետ» [Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ 1870, 74-75]: Խնձորեկի մասին մի այլ առիթով էլ գրում է. «Նախ կային ԵՃ (հինգ հարյուր) տուն ի Խնձորեկ գեղն, բայց այժմ սակաւացեալք էին՝ զի բազում ապանեալք էին ի թուրքաց… և ի գիւղս այս պատուական՝ շատ խալի և խալիզայ գործեին յառաջ, բայց այժմ նվազեցան յոյժ և հազիւ թէ ոմանք պառաւունք սակաւ գտանին գործողք» [Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ 1870, 74-75]:

Անկվածագործության ասպարեզում մեծ կարևորություն ունեն գույները: Ըստ էության, գունային երանգների ճիշտ համադրումը, դրանց փայլն ու դիմացկունությունը պայմանավորում են արտադրանքի գեղարվեստական, առավել ևս ապրանքային արժեքի բարձր նիշը: Պարզվել է, որ

տարբեր պատմաազգագրական շրջաններում ընդունված են եղել որոշակի ավանդական գույներ ու գունային երանգներ: Այս առումով ուշագրավ է, օրինակ, թուրք ուղեգրող Էվլիյա Չելեբիի (1611-1682) հաղորդումը, ըստ որի՝ պարզվում է, որ Աղձնիքում մեծապես տարածված էր դեղին գույնը [Էվլիյա Չելեբեի, 1967, 200]:

Միջնադարյան Հայաստանում մեծ էր ներկարարության ու դաջելու արհեստով զբաղվողների թիվը: Նշենք, որ առավելապես X դարից հետո է կիրառվել գործվածքների դաջուկը՝ դրոշմազարդումը: XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին մոնղոլների տիրապետության ժամանակ հարկատուների թվում նշում է. «շապարար» (ներկարար) արհեստավորներին [Կիրակոս Գանձակեցի, 319]: Ներկարար արհեստավորները գործվածքները ներկելու համար հիմնականում օգտագործել են կենդանական ու բուսական ներկեր: Ամենաարժեքավոր ու հարգի ներկը եղել է «որդան կարմիրը», որով ներկում էին արքայական, իշխանական պատմուճանները, վարագույրները, գորգերը և այլն: Որդան կարմիրը արտադրվում էր Արարատյան դաշտում բույսերի ու նրանց արմատների վրա բնակվող հազվագյուտ կարմրագույն միջատից: Անանիա Շիրակացին գրում է. «Եւ ունի Այրարատ լերունս, գետս, և դաշտս պիտանիս, և երէս, և հաւս, և զամենայն պատրաստութիւն և զծովակն Գայլատու, և որդն սիզաբերեալ արմատոց, առ ի զարդ կարմրութեանս գունոյ» [Անանիա Շիրակացի, 1979, 351]: Որդան կարմիր ներկի մասին հայ պատմիչները հիշատակել են՝ V դարից սկսած*: Ղազար Փարպեցին Արարատյան դաշտի նկարագրության մեջ գրում է. «… Նաև զարմատս եղէգնասէր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Արարատոյ, այլև ի նմանէ ծնեալ **որդունս**, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս» [Ղազար Փարպեցի, 21], այդ տվյալները հետագայում՝ VII-VIII դարերում, հաստատում է Անանիա Շիրակացին [Աբրահամյան Ա., 1944, 341]:

Միջնադարյան Հայաստանում կար նաև որդերի մի ուրիշ տեսակ, որ աճում էր ոչ թե սեզերի, այլ թփուտների ու ծառերի, հատկապես դեղձենու վրա [Քյուրդյան Հ., 55]:

Գործվածքների համար որպես կայուն ներկ օգտագործվում էին բուսական ներկեր, որոնք կիրառել են ոչ միայն ներկարար արհեստավորները, այլև շինական գյուղացի ջուլհակները:

Բուսական ներկերի մասին եզակի վկայություններ կան հայ պատմիչների երկերում: Այսպես, Ա. Շիրակացին հիշատակում է **գիստորը** [Աբրահամյան Ա., 349]: Առավել շատ գործածվողը **տորոնն** էր, որով ներկում էին հիմնականում բրդե գործվածքները: Ուշագրավն այն է, որ տորոնի արմատները տարվա տարբեր եղանակներին ընդունում էին տարբեր գույներ. գարնան ամիսներին նրա արմատներից ստանում էին դեղին գույն, ամռանը՝ նարնջի, իսկ աշնանը՝ մուգ կարմիր:

Դեղին գույն ստանում էին **դեղնաածաղիկ** (գեառանկ), **տոտռլ** կամ **բոքի, ալաժանը** (շան խաղող) բույսերից: Ի դեպ, այս վերջինիս վրա աճող պտուղները դեռ չհասած ժամանակ տալիս են կանաչ ներկ, իսկ հասնելուց հետո՝ սև գույնի հեղուկ, որից պատրաստում էին թանաք: Այդ նույն կերպ բարբարիս կոչվող փշատերև արմատներից ստանում էին դեղին ներկ, իսկ պտուղները տալիս էին կարմիր գույն: Դեղին ներկ էին ստանում նաև **իշան կաթուկ** կոչվող բույսից:

---

* Ք.ա. VIII դարում Ասորեստանի արքա Սարգոնի գրված գանձերի թվում հիշատակվում է նաև «Արարատի» նշանավոր ու կարմիր հյուսվածքեղենը, որ ներկվել է որդան կարմիրով (տե՛ս [Քյուրդյան **Հ.**, 1932, 37]):

Բաց շագանակագույն, նարնջագույն ներկ էին ստանում սոխի կեղևից, իսկ եթե սոխի կեղևի հետ խառնում են ավելուկ կոչվող բույսը, ապա ստացվում է մուգ շագանակագույն: Նույնանման գույն ստացվում էր նաև քարաքոսից, մասուրից և դաղձ կոչվող բույսից: Սև գույնի համար օգտագործում էին ընկուզենու տերևը և ընկույզի կանաչ կեղևը: Չգունաթափվող ներկ ստանում էին ընկուզենու արմատի հավելումից: Հավելենք, որ Հայաստանը հարուստ էր նաև հանքային ներկերով՝ կանաչ, կապույտ, կարմիր և դեղին գույներ ստանալու համար: Հանրահայտ է, որ միջնադարյան Հայաստանում ներկը բնորոշվում էր բարձր որակով: Այդ մասին ակնառու վկայում են նաև միջնադարյան մանրանկարիչներն ու XIII-XVIII դդ. վերաբերող գործվածքի նմուշները, որոնք դիմանալով բազում դարերի ընթացքում եղած տարբեր ներգործություններին, մնացել են անխաթար և գունագեղ վիճակում: Գրավոր սկզբնաղբյուրներում կան հաղորդումներ, որոնցից պարզվում է, որ ներկերի պատրաստման ու թելերի ներկման համար տնայնագործներից բացի, միջնադարյան Հայաստանում գոյություն են ունեցել նաև հատուկ ներկարարներ: Նրանց նշանակալից քանակի մասին է վկայում մասնավորապես Կիրակոս Գանձակեցին մոնղոլներին հարկատու արհեստավորների շարքում հիշատակելով նաև ներկարարներին [Կիրակոս Գանձակեցի, 349]: Սակայն հետագա դարերում անկվածագործական մշակույթը, այդ թվում՝ նաև գորգագործությունը, տարածաշրջանի ռազմաքաղաքական ու ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխման պայմաններում զգալի անկում ապրելով, կորցնում է իր երբեմնի հռչակը: Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների, ապա թուրքմենական տարատեսակ ցեղերի միջև երկարամյա պատերազմների թատերաբեմ դարձած Հայաստանից XIV-XV դարերում ծայր են առնում զանգվածային արտագաղթերը, բացի դրանից՝ բնակչության, մասնավորապես արհեստավորական խավի մի մասը գերեվարվում ու տարվում է միջինասիական քաղաքներ: Անտարակույս ոչ քչերն էլ ընդունում են մահմեդականություն ու ժամանակի ընթացքում ձուլվում եկվորներին [Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ, 1860, 95]: Տնտեսամշակութային անկման ժամանակաշրջանը, ըստ էության, տևեց մինչև XVII դարի կեսերը՝ մինչև Հայաստանի վերջնական բաժանումը Թուրքիայի ու Պարսկաստանի միջև: Հայոց մշակույթի այս ոլորտի գեղազարդման համակարգը, ունենալով շատ հինավուրց տեղական ակունքներ, հետագա դարերում ևս, չնայած երկրի քաղաքական ու տնտեսական անկայուն ու աննպաստ պայմաններին, շարունակում էր պահպանվել:

Եզրակացություն: Ներկայացված նյութից եզրահանգում ենք, որ միջնադարյան Հայաստանի տեքստիլ բնագավառի տնայնագործական արտադրանքը մեծ ճանաչում էր ձեռք բերել տարածաշրջանում՝ բարձր որակի, գեղեցիկ ձևվածքների, գույների. նկարազարդումների շնորհիվ: Դա, փաստորեն, մի ուրույն, հնամենի ոլորտ էր, մասնավորապես VII-XIV դարերում առավել զարգացած ու կազմակերպված բնույթ ուներ: Ընդ որում, արքունիքին, նախարարական խոշոր տներին ու վանական համալիրներին կից գոյություն ունեին հատուկ գործատներ, որոնց արտադրանքը մասամբ ուղղված էր նաև արտաքին շուկայի բավարարմանը: Անկվածագործության նշանավոր կենտրոններ էին Անին, Դվինը, Կարսը, Կարինը, Երզնկան, Խլաթը, Նփրկերտը: Հայկական հռչակավոր ծիրանի գործվածքի արտադրության նշանավոր կենտրոնը Դվինն էր: Հայ պատմիչների աշխատություններում անկվածագործական մշակույթի

վերաբերյալ առատ տեղեկություններ են պահպանվել, որոնք վկայում են այս ոլորտի զարգացած լինելու մասին: Վերը ասվածը ըստ ամենայնի թույլ է տալիս ընդգծել, որ անկվածագործական մշակույթը հայոց մեջ կարևոր նշանակություն ունեցող ավանդական ոլորտ էր: Հազարամյակների ընթացքում հայ իրականության մեջ ձևավորվել էր անկվածի գեղազարդման համակարգին առնչվող առանձնահատուկ համակարգ: Մատենագիրների վկայությունների համաձայն՝ անկվածագործության արտադրանքը բավարարում էր թե՛ տեղական պահանջը և թե՛ արտահանվում էր երկրից դուրս: Հայկական գործվածքները միջազգային առևտրի մեջ զգալի տեղ էին գրավում:

References

Abraham katʻoghikosi Kretatsʻuoy Patmutʻiwn antsʻitsʻn iwrōtsʻ ew Natr Shahin parsitsʻ 1870, Vagharshapat, 129 ej:

Abrahamyan A. 1944, Anania Shirakatsʻi matenagrutʻiwn, Erevan, 420 ej:

Abrahamyan V. 1956, Arhestnerë Hayastanum IV–XVIII dd., Erevan, 290 ej:

Agatʻangeghay, Patmutʻiwn hayots, ashkhatutʻamb G. Ter-Mkrtchʻean ew St. Kanayeantsʻi, 1909, Tpʻghis, 491 ej:

Anania Shirakatsʻi 1979, Matenagrutʻiwn, Erevan, 398 ej:

Arakʻelyan Babken 1958, Kʻaghakʻnerë ew arhestnerë Hayastanum IX–XIII dare-rum, h. 1, Erevan, 376 ej:

Avagyan Nazik 1983, Haykakan zhoghovrdakan tarazë, Erevan, 109 ej:

Grigor Magistrosi Tʻghtʻerë 1910, Aleksandrapol, 352 ej:

Davtʻyan S. 1981, Dipak, Drvagner haykakan miǰnadarʻyan krknakan arvesti patmutʻyan, Erevan, 182 ej:

Davtʻyan S. 1975, Haykakan karpet, Erevan, 67 ej:

Eznik Koghbatsʻi 1914, Yeghts aghandots, Tʻiflis, 226 ej:

Yeghishē 1957, Vasn Vardanay ew hayots paterazmin, Erevan, 224 ej:

Evliya Chʻelebe 1967, Ughagrutʻiwnner, Tʻurkakan aghbyurner, G, targm. bnagritsʻ, arrajabane ew tsʻanotʻagr. A. Kh. Safrastʻyani, Er., 346 ej:

Tʻemurchʻyan V., 1955, Gortsagortsutʻiwnë Hayastanum, patma-azgagrakan usumnasirutʻiwn, Erevan, 230 ej:

Zhoghvatsʻoykʻ arakats Vardanay 1894, h. B, Vienna, 344 ej:

Kirakos Gandzaketsʻi 1961, Patmutʻiwn hayots, ashkhatasirutʻyamb Melik-Ohanchʻanyani, Erevan, 533 ej:

Hakob Karentsʻi 1903, Teghagir Verin Hayots, Vagharshapat, 75 ej:

Ghewond Alishan 1885, Sisuan, Venetik, 481 ej:

Ghazar Pʻarpetsʻi, Patmutʻiwn hayots 1907, Tʻughtʻ ar Vahan Mamikonean, Tʻiflis, 458 ej:

Ghaphadaryan K. 1945, Avani erklezvyan tsatskagir arzanagrotsʻutʻiwnë, Erevan, 124 ej:

Metsin Vardanay Barjrberdetsʻi, Patmutʻiwn tiezerakan, i luys ëntsayēatsʻ Mkrtichʻ Emin, 1861, Moskva, 181 ej:

Mkhitʻar Gosh 1951, Arakner, Erevan, 142 ej:

Movsēs Khorenatsʻi 1940, Patmutʻiwn hayots, Erevan, 368 ej:

Movsēs Kaghankatvatsʻi 1860, Patmutʻiwn Aghwanitsʻ ashkharhi, Pariz, 15 ej:

Yovhannēs katʻoghikos Draskhanakertsʻi, Patmutʻiwn hayots 1912, Tʻiflis, 198 ej:

Nahapetyan R. 2023, Hay azgagrutʻyan aghbyurner, Erevan, 426 ej:

Nemesios pʻilosopʻa Emesatsʻi, Hagags bnutiwn martoy 1889, Venetik, 85 ej:

Nersēs Shnorhali 1825, Tʻughtʻ endhanrakan, K. Polis, 176 ej:

Nor bargirkʻ haykazēan lezui, hegh. G. Avetikʻean, Kh. Siurmelēan, Mk. Avgerēan 1979–81, ht. A–B, Er., girkʻ A, 1067 ej:

Ukhtanēs episkopos 1871, Patmutʻiwn hayots, i Vagharshapat, hatvatsʻ erkrord, 116 ej:

Patmutʻiwn ananun zrutsʻagri (kʻarjētsʻeal Shapuh Bagratuni) 1971, Erevan, 238 ej:

Patmutʻiwn Lankʻ Tʻamuray ew yajuordatsʻ iwrōtsʻ, ararēal Tʻovma vardapet Metsobetsʻi 1860, Pariz, 134 ej:

Samuel Kʻahanay Anetsʻuoy grotsʻ havakʻmunkʻ patmagratsʻ, yarrajabanov, hamematutʻyamb, yavelvatsʻnerov ew tsʻanotʻagr. Arshak Ter-Mikʻayelyan 1893, Vagharshapat, 155 ej:

Sukiasyan A., 2009, Hayots lezvi homanishneri batsʻatrakan barraran, EPH hr. Er., 1242 ej:

Stepʻanos Orbelēan 1911, Patmutʻiwn nahangin Sisakan, Tʻiflis, 618 ej:

Stepʻanos Tarōnatsʻi Asoghkan, Patmutʻiwn tiezerakan 1885, S. Petʻerburg, 456 ej:

Pʻavstos Buzand 1987, Patmutʻiwn hayots, targm. ew tsʻanotʻ. St. Malkhasiantsʻi, Erevan, V dpr. g. E, 456 ej:

Kʻyurdyan H. 1932, Vordan karmir, Venetik, 236 ej:

Frik 1941, Banasteghtsʻutʻyunner, Erevan, 276 ej:

Durnovo L. 1953, Armyanskaya naboyka, Moskva, 72 s.

Manandyan A. 1954, O torgovle i gorodakh Armenii v svyazi s mirovoy torgovley drevnikh vremen (V v. do n. ery-XV v. n. ery). 2-e izd., pererab. i dop. Erevan: Izd-vo Erevanskogo un-ta, 347 s.